ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի թռիչքային գործունեության հարցերով փորձագետի կողմից 2024 թվականի մարտի 11-ից մինչև 2024 թվականի սեպտեմբերի 6-ը եղած ժամանակահատվածում կատարված աշխատանքների վերաբերյալ

Հաշվետու ժամանակահատվածում իմ կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. իրականացրել եմ թվով 23 վերահսկողություն՝ ստուգումներ (կցվում է), համաձայն Հայաստանի Հանրապետության օտարերկրյա օդանավերի թռիչքների անվտանգության գնահատման (SAFA) ծրագրի և այդ ստուգումներն իրականացնելուց հետո ներկայացրել եմ համապատասխան ստուգաթերթիկներ և զեկուցագրեր:

2. մշակել եմ թռիչքային անձնակազմի պահանջների տեխնիկական եվ ադմինիստրատիվ նորմատիվային փաստաթղթերի նախագծեր և դրանց անհրաժեշտ փոփոխությունների նախագծեր՝ կարգավորող մարմիններից փոփոխություններ ստանալուց հետո:

3. նախապատրաստել եմ Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի թռիչքային գործունեության վարչության առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, եզրակացություններ, այլ փաստաթղթեր, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցեր:

4. իրականացրել եմ կառամատույցային տեսչական ստուգում (թվով 1) Հայաստանի Հանրապետությունում գրանցված օդանավ շահագործող ընկերությունում՝ թռիչքային գործունեության վարչության պետ Արամ Եղոյանի հետ համատեղ:

Դավիթ Ադամյան

Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի
թռիչքային գործունեության հարցերով փորձագետ

06.09.2024թ.

Դավիթ Ադամյանի կողմից կատարած աշխատանքները գնահատում եմ .....

(բավարար, լավ կամ գերազանց)

Քաղաքացիական ավիացիայի
կոմիտեի նախագահ